

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Անգլերենի ուսուցման հիմնախնդիրը տարեցտարի ավելի է կարևորվում թե՛ նվրդական տարբեր կառույցներին իմտեզրվելու և թե՛ համաշխարհային տնտեսական, կրթական զարգացումներից հետ չմնալու տեսանկյունից: Կրթության գործը կազմակերպողները կարևորում են նոր մեթոդների, հմարների, տեխնոլոգիաների, ժամանակակից ուսումնամեթոդական համալիրների ներդրման, ինչպես նաև անգլերենի ուսուցիչների մեթոդական պատրաստվածության հիմնախնդիրը:

Այդ խնդիրն ավելի է կարևորվում ավագ դպրոցին անցման, նոր կրթական համակարգի ձևավորման և կայացման պայմաններում: Անգլերենի ուսուցիչները հայտվել են մի իրավիճակում, երբ նրանցից պահանջվում է հաղթահարել C1, C2 մակարդակները, և շատ ուսուցիչներ աստիճանաբար մոտենում են ճշված մակարդակներին՝ պատրաստվելով և հանձնելով թեստ TOEFL կամ IELTS¹ համակարգերով:

Դրա հետ մեկտեղ, գերակա խնդիր է մնում նրանց մեթոդական պատրաստվածության հարցը: Նրանք պետք է կարողանան նախագծել տվյալ դասընթացը, իրականացնել աշակերտների պահանջմունքների վերլուծություն, օգտագործել շրջանառվող հայկական և արտերկրի դասագրքաշարերի, մեթոդական լրակազմների օգտագործման, տվյալ դասընթացի խնդիրներին հարմարեցման հնարավորությունները, ծրագրել, պլանավորել կոնկրետ դասեր և այլն:²

Անգլերենի ուսուցիչների մեթոդական իրազեկության մակարդակի վերաբերյալ պատկերացում կազմելու նպատակով մեր կողմից հարցախույզ է իրականացվել Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի երկուական դպրոցներում: Ամմիջապես ասենք, որ անգլերենի ուսուցիչների կողմից ակնհայտ հետաքրքրություն ցուցաբերվեց ուսուցիչների մեթոդական իրազեկության րացահայտման նպատակով առաջարկված հարցաշարի նկատմամբ.

1. Ի՞նչ ամսագրեր եք կարդում:
 - ա) «Иностранные языки в школе»,
 - բ) «Педагогика»,
 - գ) «Forum»,
 - դ) Չեք տարբերակը:
2. Ի՞նչ օրաթերթեր եք կարդում:
 - ա) «Կրթություն»,
 - բ) «Հայաստանի Հանրապետություն»,
 - գ) Չեք տարբերակը:
3. Ի՞նչ համացանցային կայքեր եք այցելում:
 - ա) mail.ru,
 - բ) google.ru,
 - գ) yahoo.com,

¹ Տե՛ս IELTS, the International English Language Testing System, is designed to assess the language ability of candidates who need to study or work where English is used as the language of communication. IELTS is required for entry to university in the UK and other countries.

² Հայրապետյան Ն., Պահանջմունքների վերլուծությունն անգլերենի խորացված ուսուցման դասընթացում: Գյումրի, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի Գիտական աշխատություններ, հ. 9, 2006, էջ 144; Hutchinson T., Waters A. English for Specific Purposes: A Learning-centered approach. Cambridge: Cambridge University Press, 1987, p.74

- դ) yandex.com,
 ե) Չեք տարբերակել:
4. Ի՞նչ լեզվով եք նախընտրում դիտել անգլիախոս ֆիլմերը:
 ա) հայերենով,
 բ) ռուսերենով,
 գ) անգլերենով,
 դ) Չեք տարբերակել:
5. Օգտվո՞ւմ եք միջնադրամաքային արևհավաքից:
 ա) այո,
 բ) ոչ
6. Ուսուցման ո՞ր մեթոդն եք նախընտրում:
 ա) ուղիղ,
 բ) քերականական-թարգմանական,
 գ) լսատեսողական,
 դ) հատորդակցական,
 ե) Չեք տարբերակել:
7. Մխալներն ինչպե՞ս եք ուղղում:
 ա) միանգամից,
 բ) դասի վերջում,
 գ) անուղղակի,
 դ) Չեք տարբերակել:
8. Ի՞նչ դասագրքերից եք օգտվում:
 ա) միայն ռուսական,
 բ) ռուսական և հայկական,
 գ) ռուսական և անգլիական,
 դ) Չեք տարբերակել:
9. Ներկայացնո՞ւմ եք Հայաստանի ներկագիտությունը:
 ա) ոչ,
 բ) այո,
 գ) Չեք տարբերակել:
10. Համեմատո՞ւմ եք Հայաստանի և Անգլիայի ներկագիտական իրողություններն ու իրությունները:
 ա) ոչ,
 բ) այո,
 գ) Չեք տարբերակել:
11. Ընթերցո՞ւմ եք անգլերեն լեզվով ամսագրեր կամ օրաթերթեր:
 ա) ոչ,
 բ) այո,
 գ) Չեք տարբերակել:

Հարցման ենթարկված 25 ուսուցիչներից միայն յոթն են կարդում «Иностран-
 ные языки в школе», միայն չորսը՝ «Педагогика» ամսագրերը: Սակայն ինը ուսուցիչ
 պարբերաբար կարդում են «Forum»-ը, ինչը, համեմատած խորհրդային շրջանի հետ,
 միանգամայն նոր երևույթ է: Ինչ վերաբերում է «Չեք տարբերակել» պատասխանին,
 ապա երեք ուսուցիչը կարդում է Yes!, ևս երկուսը՝ new mag. Yes!: Ասվածից կարելի է
 եզրահանգել, որ վիճակը ամենևին էլ բարվոք չէ: Գրեթե մոռացվել է նախկին ավան-
 դույթը, երբ բոլոր ուսուցիչները, թեկուզև պարտադիր, բաժանորդագրվում էին մանկա-
 վարժա-մեթոդական գրականություն: Մինչդեռ ուսուցիչների նոր սերունդը դեռևս ակ-

տիվորեն չի օգտվում արտերկրի և ժամանակակից հայկական մանակավարժական գրականությունից:

Նույնը վերաբերում է օրաթերթերի ընթերցմանը. «Ի՞նչ օրաթերթեր եք կարդում» հարցին տասնյոթ ուսուցիչ պատասխանել են՝ «Կրթություն», վեցը՝ «Հայաստանի Հանրապետություն»: Հուսադրող է այն, որ ուսուցիչների շրջանում «Կրթություն» շաբաթաթերթի ընթերցողների թիվն ավելի մեծ է: Սակայն հաջորդ հարցի պատասխանները ցույց են տալիս, որ անգլերենի ուսուցիչներն այնքան էլ հետաքրքրված չեն մեթոդական բնույթի խնդիրներով, քանի որ հարցման ենթարկված ուսուցիչներից տասնվեցը օգտվում են mail.ru կայքից՝ ամենայն հավանականությամբ հետապնդելով մամակ կամ ուղերձ գրել-ստանալու նպատակ: Չորս ուսուցիչ օգտվում են google.ru և երեքը՝ yahoo.com կայքերից: Դա նշանակում է, որ ուսումնամեթոդական բնույթի կայքերը նրանց այնքան էլ չեն հետաքրքրում: Միայն երկու ուսուցիչ էր նշել «իր տարբերակը»՝ ascp.am, britishcouncil.am, dogpile.com, rambler.ru: Դժվար չէ հետևություն անել, որ անգլերենի ուսուցիչների սովոր մասը պարզապես չի օգտվում ժամանակակից հեռահաղորդակցական միջոցներից:

«Ի՞նչ լեզվով եք նախընտրում դիտել անգլիախոս ֆիլմերը» հարցին ուշագրավ պատասխան է տրվել. Համարյա բոլոր ուսուցիչները նշել են «անգլերենով» պատասխանը և միայն մեկը՝ «ռուսերենով»: Կարելի է ենթադրել, որ պատասխաններն այնքան էլ անկեղծ չեն, այն առումով, որ անգլերենով ֆիլմեր դիտելու համար համապատասխան մեթոդական և լեզվական պատրաստվածություն է անհրաժեշտ: Ի դեպ, հարցի պատասխանների ստուգությունն ու անկեղծությունը պարզելուն անուղղակի նպաստում են «Օգտվո՞ւմ եք միջմայրցամաքային ալեհավաքից» հարցին տրված պատասխանները: Այն, որ միայն վեց ուսուցիչ է օգտվում վեբոմշյալ ալեհավաքից, իսկ մնացածները պարզապես չունեն այն, անուղղակիորեն վկայում է նրանց՝ անգլերեն լեզվով ֆիլմեր դիտելու ցանկության և ոչ դրա իրական հնարավորությունների մասին:

«Ուսուցման ո՞ր մեթոդն եք նախընտրում» հարցի պատասխանների վերլուծությունը նույնպես հաստատում է այն նախնական ենթադրությունը, որ անգլերենի ուսուցիչների մեթոդական պատրաստվածության մակարդակը իրականում բարձր չէ. երեք ուսուցիչ նախընտրում է ուղիղ մեթոդը, հինգը՝ քերականական-թարգմանական մեթոդը, տասը՝ լատենտոդականը, դ) յոթը՝ հաղորդակցականը, իսկ «Չեմ տարբերակ»-ին պատասխաններ չեն եղել:

Ամենայն հավանականությամբ ուսուցիչների մեծ մասը լատենտոդական մեթոդը շփոթել է լատենտոդական միջոցների հետ, և կարծում ենք՝ դա է իրական պատճառը, որ տասը ուսուցիչներ նշել են լատենտոդական մեթոդը: Ավելի անկեղծ են երևի այն ուսուցիչները (հինգ), ովքեր կողմնորոշվել են հօգուտ քերականական-թարգմանական մեթոդի, և այս ամենն այն պարագայում, երբ ժամանակակից խորացված ուսուցման ուսումնամեթոդական լրակազմերը գրված են գերազանցապես հաղորդակցական մոտեցման սկզբունքներով: Նույնը վերաբերում է սխալների ուղղմանը. Միայն ութ ուսուցիչ են սխալներն ուղղում անուղղակի, իսկ տասնյոթն ավելի անկեղծ են գտնվել՝ նշելով, որ սխալներն ուղղում են միանգամից:

Ինչ վերաբերում է դասագրքերին, ապա նախորդ և այս հարցի պատասխանների (ռուսական դասագրքեր-երկու ուսուցիչ, ռուսական և հայկական-երկուսը, ռուսական և անգլիական-քսանմեկը) համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսուցիչներն անգլերենի դասերին շատ քիչ են ուշադրություն դարձնում հայրենագիտական գիտելիքների զարգացմանը և փաստորեն պատկերացում չունեն, թե ինչ ասել է հայերեն-անգլերեն քերականական, բառային, հնչյունական և մշակութային տիպաբանություն, երբ անգլերեն լեզվանյութի ուսուցումն իրականացվում է՝ հաշվի առնելով

հայերենի համապատասխան լեզվամշակութային իրողությունների և երևույթների առանձնահատկությունները:

«Ներկայացնում եք Հայաստանի երկրագիտությունը» հարցի պատասխանները (ոչ՝ ուրիշ, այո՝ տասնյոթը) ուշադրության են արժանի մաս այն տեսանկյունից, որ նախորդ հարցին պատասխանելիս, միայն երկու ուսուցիչ էր նշել, որ գործածում է հայկական դասագրքերը:

Հաջորդ հարցի պատասխանները վստահություն չեն ներշնչում այն առումով, որ հայկական դասագրքերից համարյա չօգտվող ուսուցիչները (ընդ որում, քսաներեքը) միաձայն նշում են, որ դասասնորոգեսի ընթացքում աշխատում են համեմատություններ անցկացնել Հայաստանի և Անգլիայի երկրագիտական իրողությունների միջև:

Համեմատաբար հավաստի են թվում «Ընթերցում եք անգլերեն լեզվով ամսագրեր կամ օրաթերթեր» հարցի պատասխանները (ոչ՝ մեկ ուսուցիչ, այո՝ քսանչորսը), քանի որ հարցի մեջ հատուկ ընդգծված չէ, թե ինչ հաճախականությամբ են ուսուցիչները կարդում անգլերեն օրաթերթերը:

Կատարված վերլուծության արդյունքներն ամփոփելով անհրաժեշտ է ևս մեկ անգամ նշել, որ անգլերենի ուսուցիչների մեթոդական իրազեկության բարձրացման համար տարվող աշխատանքը պահանջում է իրականացնել համալիր միջոցառումներ: Դա վերաբերում է թե՛ բուհական և թե՛ հետբուհական կրթությանը: ՀՀ-ի կրթական համակարգի համար նախատեսված ուսումնամեթոդական լրակազմերի բացակայության պայմաններում անհրաժեշտ է լուծում տալ ՀՀ հանրակրթական դպրոցների համար նախատեսված անգլերենի, ՌԴ կրթական համակարգի համար նախատեսված հանրակրթական, անգլերենը որպես երկրորդ և անգլերենը որպես առաջին լեզու ներկայացնող դասագրքերի համալիր ուսումնասիրության և նրանց համապատասխան բաժինների և ենթաբաժինների հարմարեցման հարցին:

Անգլերենի ուսուցիչները պետք է կարողանան ժամանակին վերանայել շրջանառվող ուսումնական միջոցները, մասնավորապես լուրջ ուշադրություն դարձնեն ոչ միայն անգլերենի երկրագիտական, այլև հայերենագիտական իրազեկության զարգացման վրա: Դրա հետ մեկտեղ՝ նրանք պետք է կարողանան տարբեր ուսումնական իրադրություններում ընտրել այնպիսի անգլերեն տեքստեր, որոնք տեղեկատվություն են պարունակում քաղաքակրթությունների, անգլիախոս երկրների, անգլախոս երկրների պատմության, աշխարհագրության, մշակույթի, սովորույթների և ավանդույթների, լեզվաբանության, հեքիաթների և տարբեր իրադարձությունների մասին, ինչպես նաև Հայաստանի սոցիալ-մշակութային իրողությունների, հայերենի և անգլերենի գոգադրական օրինաչափությունների, տվյալ տարածաշրջանի ավանդույթների, պատմության, մշակույթի ու բարքերի մասին:

Եզրակացություն. Նոր կրթական համակարգի անցման շրջանում կարևորվում են ոչ միայն շրջանառվող արտասահմանյան և հայկական դասագրքերի օգտիմալ օգտագործման և հարմարեցման, այլև որակյալ անգլերենի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման, շարունակական կրթության ապահովման հիմնախնդիրները: Դրա համար անհրաժեշտ է համակարգված համագործակցային դաշտ ստեղծել դպրոցական և բուհական գործը կազմակերպողների համար: Անգլերենի թե՛ նորավարտ և թե՛ փորձառու ուսուցիչները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն իրենց մեթոդական պատրաստվածության վրա: Առկա բուհական, հետբուհական կրթության համակարգը շարունակական զարգացման, կատարելագործման անհրաժեշտություն ունի:

Հայ մանակավարժները պետք է կարողանան համագործակցել թե՛ ՀՀ-ի, թե՛ արտերկրի /հատկապես անգլախոս/ անգլերենի ուսուցմանը առնչվող մեթոդիստների, մանակավարժների և լեզվաբանների հետ: Կարևորվում է ժամանակակից հեռահաղոր-

դասցական միջոցներից օգտվելու հիմնախնդիրը: Դա վերաբերում է թե՛ ուսումնական, ուսուցողական րնույթի տարրեր կայքերից օգտվելուն և թե՛ սոցիալական ցանցերի միջոցով արտերկրի գործընկերների հետ շփվելուն: Խնդիրը համաշխարհային կրթական զարգացումներից հետ չմնալն է, և անգլերենի ուսուցիչների մեթոդական պատրաստվածությունը նշված համատեքստում սկզբունքային նշանակություն ունի:

К ВОПРОСУ О МЕТОДИЧЕСКОЙ ПОДГОТОВЛЕННОСТИ УЧИТЕЛЕЙ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Резюме

Н. Айрапетян

В данной статье рассмотрены особенности подготовки и переподготовки учителей английского языка в Армении. Анализ результатов опроса учителей английского языка показал, что многие учителя не читают научно-методическую, педагогическую литературу, не пользуются возможностями современных телекоммуникационных средств, не посещают библиотеки. Сделан вывод о необходимости кардинальных изменений в системе подготовки учителей.